

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ
2020Թ. 2-ԸՆԴ ԿԻՍԱՍՅԱԿ****ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Չնայած Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությանը, նոր տեսակի Կորոնավիրուսի համաճարակի տարածմամբ պայմանավորված իրավիճակին, առկա անորոշություններին, 44 օր տևած պատերազմին և դրանով պայմանավորված հայտարարված ռազմական դրությանը, Բանկը հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է հաճախորդներին որակյալ ծառայությունների մատուցումը և ապահովել է նույնիսկ ֆինանսական որոշ ցուցանիշների աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ համեմատ:

Հիմնվելով վերջին տարիների արդյունքների և շահութաբերության մակարդակի վրա՝ հեռանկարային զարգացման համատեքստում Բանկի առաջիկա տարիների գործունեությունը միտված է այնպիսի համակարգային միջոցառումների և տեխնոլոգիաների ներդրմանն ու զարգացմանը, որոնք հիմնարար և կայուն հիմքեր ու նախադրյալներ կստեղծեն Բանկի նոր որակական զարգացման համար:

Անդրադառնալով հիմնական ֆինանսական ցուցանիշներին՝ պետք է նշենք, որ Բանկը 2020 թվականի 2-րդ կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ապահովել է ակտիվների մոտ 2% աճ: **Ակտիվները** 31.12.2020թ.-ի դրությամբ կազմել են 332 մլրդ դրամ, ընդ որում հաճախորդներին տրված վարկերը (համախառն վարկային պորտֆելը) կազմել է 238 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 7.3 մլրդ դրամով (3.2%-ով) և կազմել ընդհանուր ակտիվների 72%-ը, որից,

- Անհատական վարկային պորտֆելը նվազել է 1.6 մլրդ դրամով (1.5 %-ով)
- Բիզնես վարկային պորտֆելը աճել է 8.9 մլրդ դրամով (7.5%-ով):

Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել են մոտ 2.5 մլրդ դրամով կամ 0.9%-ով և կազմել 283 մլրդ դրամ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի **սեփական կապիտալը** կազմել է 48.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 3.8 մլրդ դրամով կամ 8.7%-ով:

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի **զուտ շահույթը** կազմել է 2.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 53%-ով՝ պայմանավորված

վարկային կորուստների գծով ծախսի ավելացմամբ: Ընդ որում գործառնական շահույթի աճը կազմել է 15.4%:

Ծախս / Եկամուտ հարաբերակցությունը կազմել է 50.6%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 55% ցուցանիշի դիմաց:

2020թ.-ի երկրորդ կիսամյակում Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունները բնորոշել են նրա վճարունակության, իրացվելիության բարձր մակարդակը՝ վարկային և իրացվելիության ռիսկերին դիմակայելու մեծ պոտենցիալը: Հիմնական տնտեսական նորմատիվները ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում եղել են ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվների թույլատրելի մեծության սահմաններում:

Բանկի ֆինանսավորման աղբյուրները

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի կողմից ներգրավված փոխառու միջոցների կազմում ամենամեծ տեսակարար կշիռը՝ 80.3%, կազմել են հաճախորդներից ներգրավված միջոցները: Սույն ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է ավելի քան 5.8 մլրդ դրամով (2.6%-ով), ինչը վկայում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ճկուն սակագնային քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին: Բանկերից ներգրավված միջոցները կազմում են փոխառու միջոցների 2.3%-ը, այլ փոխառու միջոցները՝ 8.3%:

31.12.2020թ.-ի դրությամբ Բանկի դրամային, դոլարային և եվրոյով տեղաբաշխված պարտատոմսերի ծավալը կազմել է 21.5 մլրդ ՀՀ դրամ, որոնք կազմում են փոխառու միջոցների 7.6%-ը:

Այսպիսով, 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը գրանցել է սեփական և փոխառու միջոցների 17.0% հարաբերակցություն՝ 283.8 մլրդ ՀՀ դրամ փոխառու միջոցների և 48.1 մլրդ ՀՀ դրամ սեփական կապիտալի մեծությամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգը, անկախ պատերազմի հետ կապված հայտարարված ռազմական և Կորոնավիրուսի հետ կապված՝ արտակարգ դրության պայմաններին, որոշ ցուցանիշների գծով արձանագրել է աճ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ համեմատ: Բանկային համակարգի ակտիվները աճել են 15.5%-ով՝ կազմելով 6,642.93 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները հաճախորդների նկատմամբ՝ 2.43%-

ով՝ կազմելով 3,564.27 մլրդ ՀՀ դրամ, ընդհանուր կապիտալի գծով արձանագրվել է 7.32% աճ և կազմել 895.2 մլրդ ՀՀ դրամ: 31.12.2020թ.-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի զուտ շահույթը կազմել է 60.4 մլրդ ՀՀ դրամ, որը 19.11%-ով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Բանկը 31.12.2020թ. դրությամբ բանկերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա հաշվարկված ֆինանսական ցուցանիշներով ՀՀ բանկային համակարգում զբաղեցնում է՝

- ակտիվներ՝ 8-րդ տեղ (332 մլրդ դրամ կամ համակարգի 5.0%),
- պարտավորություններ հաճախորդների նկատմամբ՝ 6-րդ տեղ (228 մլրդ դրամ կամ համակարգի 6.4%),
- վարկային ներդրումների ծավալով՝ 5-րդ տեղ (229.3 մլրդ դրամ կամ համակարգի 5.7%),
- ընդհանուր կապիտալ՝ 8-րդ տեղ (48.1 մլրդ դրամ կամ համակարգի 5.4%),
- զուտ շահույթ՝ 6-րդ տեղ (2.55 մլրդ դրամ կամ համակարգի 4.2%):

ՈՍԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բանկը ՀՀ բանկային համակարգում դիրքավորված է և գործունեությունը ծավալում է որպես ունիվերսալ բանկ՝ զարգացման գերակա ուղղություն դիտարկելով մանրածախ բանկային ծառայությունների զարգացումը և որակյալ բանկային ծառայությունների մատուցումը՝ թվային տեխնոլոգիաների առաջանցիկ զարգացման միջոցով:

Այս առումով վերջին տարիներին Բանկի կողմից հետևողականորեն և հաջողությամբ իրականացված նոր թվային գործիքների ներդրումը, բիզնես գործընթացային փոփոխությունները, պրոդուկտների ու ծառայությունների համար նախատեսված գործիքակազմի արդյունավետության բարձրացումն ուղղակիորեն արտացոլվել է Բանկի ֆինանսական ցուցանիշներում՝ ապահովելով մանրածախ բանկային ծառայությունների գծով առաջատար դիրքեր, ինչպես նաև թվային նոր գործիքների ներդրման արդյունքում ապահովելով ինչպես թվային հարթակներից օգտվող հաճախորդների, այնպես էլ Բանկի կողմից թվային հարթակներով մատուցվող բանկային ծառայությունների զգալի աճ:

Բանկի առաքելությունն է բավարարել մեր հաճախորդների ֆինանսական պահանջները և աջակցել նրանց՝ հասնել ֆինանսական հաջողության՝ ապահովելով սպասարկման բարձր որակ և բանկային ծառայությունների հասանելիություն թե Բանկի սպասարկման ցանցում և թե հեռահար բանկային ծառայությունների հնարավոր բոլոր եղանակներով:

Բանկի տեսլականն է դառնալ մանրածախ բանկային ծառայությունների գծով առաջին նախընտրության բանկ Հայաստանում:

Բանկը հաճախորդներին ծառայություններ մատուցելիս որդեգրել է հետևյալ արժեքները.

- Հասանելիություն
- Մատչելիություն
- Նորարարություն
- Տեղեկացվածություն
- Աջակցություն
- Սրտացավություն

Բանկը կիրառում է հետևյալ կորպորատիվ արժեքները.

- Թիմային աշխատանք
- Պատասխանատվություն
- Որոշումների կայացման իրավասությունների պատվիրակում
- Ազնվություն
- Ուսուցում և զարգացում
- Ոգևորություն:

2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքներ, ակցիաներ, ներդրված ծառայություններ և նորամուծություններ.

1. VISA վճարահաշվարկային համակարգի հետ համատեղ «Սպորտն իմ կյանքում» ակցիայի իրականացում, որի շրջանակում հաղթող ճանաչվեցին ամենաշատ 50 գործարք կատարած քարտապանները:

2. Բանկի հաճախորդ հանդիսացող տուրիստական ընկերություններից ներգնա տուրիստական փաթեթների և տուրերի ձեռքբերման դիմաց քարտով կատարված գործարքների հետվերադարձի /CashBack/ ակցիայի կազմակերպում:

3. Visa Virtual և Visa Virtual Instant Issue քարտապանների համար ակցիայի սահմանում:

4. Master Card World Elite քարտի թողարկում, Պրեմիում դասի քարտապանների համար մետաղական քարտերի թողարկում:

5. CardToCard ծառայության գործարկում սպասարկման կետերի և հաճախորդների համար, Converse Mobile նոր հավելվածում քարտից քարտ փոխանցումների գործարկում:

6. «Կանայք բիզնեսում»/«Women in Business» ծրագրի շրջանակներում Բանկի գործող վարկառուների համար արտոնյալ պայմաններով ֆինանսավորման տրամադրման ակցիայի կազմակերպում:

7. «Բրիջ առցանց վարկ» (Bridge online loan) և «Converse-Fast» վարկատեսակների ներդրում:
8. KfW և WB ռեսուրսներով ՓՄՁ ֆինանսավորման ակցիայի իրականացում:
9. Պայմանավորված կորոնավիրուսի համավարակով ստեղծված իրավիճակով հաճախորդներին մարումների աջակցության նոր ծրագրի տրամադրում:
10. ՀՀ և ԱՀ տարածքներում ռազմական դրությամբ պայմանավորված «Կոնվերս Բանկ» ՓԲԸ վարկառուների պարտավորությունների մարումների վերակազմավորման աջակցության տրամադրում:
11. ՀՀ և ԱՀ տարածքներում ռազմական դրությամբ պայմանավորված զոհված զինծառայողների և/կամ ընտանիքի անդամների համար ֆինանսավորումների արտոնյալ պայմանների տրամադրում:
12. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կազմակերպվող «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» համազգային դրամահավաքի շրջանակներում և Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամին նվիրաբերությունների փոխանցումների սակագների արտոնյալ պայմանների սահմանում, հիմնադրամին իրականացված փոխանցումների գծով Բանկի կողմից հավելյալ վճարումների իրականացում:
13. «ԷԼԻՏ ԳՐՈՒՊ» ՓԲԸ և «ԷՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ կողմից կառուցվող շենքերի անշարժ գույքերի գնորդներին հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանների սահմանում:
14. Անհատական պահատուփերի՝ արտոնյալ սակագներով տրամադրման ակցիայի իրականացում:
15. Converse Mobile հավելվածի գործարկում ֆունկցիոնալ առավել հարմարավետ պայմաններով:
16. Դարձիք Ձմեռ պապ բարեգործական միջոցառման կազակերպում ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակավայրերի, ինչպես նաև արցախյան երկրորդ պատերազմում զոհվածների երեխաների համար:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկում գործող կառավարման համակարգի զարգացումը ենթադրում է կառավարման բաց, մրցունակ, արդյունավետ համակարգի կատարելագործում, Բանկի գործունեության համապատասխանեցում արտաքին միջավայրի մշտապես փոփոխվող պայմաններին, ֆինանսական համակարգում գնալով սրվող մրցակցությանը դիմակայում, որոշումների կայացման ճկունության աստիճանի և պատասխանատվության մակարդակի բարձրացում, կորպորատիվ կառավարման համակարգի զարգացում, որն ուղղված կլինի հորիզոնական և ուղղահայաց փոխհարաբերությունների կատարելագործմանը, Բանկում բիզնես

գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացմանը և Բանկի գործունեության միջազգային լավագույն փորձի համապատասխանեցմանը՝ ապահովելով «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի պահանջները:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Բանկի հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղուն. այն է Բանկի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման ցանցի ընդլայնում և մատուցվող ծառայությունների որակի բարձացում:

Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը

Բանկն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարելու) իր մասնակիցներին (բաժնետերերին) միջանկյալ /եռամսյակային և կիսամյակային/ կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունվում է Բանկի Խորհրդի կողմից: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

Բանկի կողմից շահութաբաժինների վճարման և դրանց չափերի մասին որոշում ընդունելիս հաշվի են առնվում Բանկի կապիտալացման ու իրացվելիության ընթացիկ և կանխատեսվող մակարդակները, Բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը և վերջինիս իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, շահութաբաժինների վճարման ազդեցությունը Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների վրա, արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը Բանկի հետագա գործունեության վրա և այլն:

ՌԻՄԿԵՐ ԵՎ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները իրենց ազդեցությունն են թողնում Բանկի կողմից՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում իրականացվող գործունեության վրա: Օրըստօրե ավելանում են արտաքին աշխարհի մարտահրավերները, որոնց դիմակայելու համար Բանկը իրականացնում է ռիսկերի պարբերական մոնիտորինգ՝ մշակելով համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Ռիսկերի կառավարման ընդհանուր քաղաքականության տեսակետից Բանկը գործում է իր ներքին իրավական ակտերով սահմանված սահմանափակումների հիման վրա, նախանշված ռազմավարական ծրագրով, իր տարեկան բյուջեի և մշակված միջոցառումների պլանով:

Հավելված 1-ով ներկայացված ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում է «Ռիսկի կառավարում» թիվ 30 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի

գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն և կառավարմանն ուղղված՝ Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2020 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ